

Վ. Ա. ԱՐԱՎԱՄՅԱՆ

## ՀԱՅ ՈՍԿԵՐԻՉՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Ոսկերչությունն ու արծաթագործությունը Հայաստանում զարգացած են եղել դեռևս հնագույն ժամանակներում: Այդ մասին զրաւոր վկայություններ չկան, սակայն նյութական կուլտուրայի մեղ հասած ոսկյա զարդերն ու իրերը, որոնք կենտրոնացված են Հայաստանի պատմության պետական թանգարանի հնագիտական բաժնում, անհերքելիորեն այդ են ապացուցում: Ոսկյա զարդեր են հայտնաբերվել Հայաստանի տերիտորիայում, տարբեր ժամանակներում: Դրանցից ամենահնագույնները հայտնաբերվել են երկրորդ հազարամյակի կեսին պատկանող Կիրովականի, Լճաշենի, Օձունի և այլ վայրերի դամբարանների պեղումների ժամանակ:

Ուրարտական շրջանում ոսկերիչներն իրենց արվեստում կիրառել են գրվագման, թելի և հատիկավոր տեխնիկան: Այդ են վկայում Թոփրախկալայի և Կարմիր բլուրի պեղումներից հայտնաբերված ոսկյա և արծաթյա նուրբ զարդարանքները, ինչպես նաև Սիսիանի և Գառնիի պեղումներից ստացված ոսկերչական արվեստի լավագույն նմուշները:

Միջնադարում ոսկերչությունը զգալիորեն զարգացել և դարձել էր հասարակական անհրաժեշտություն: Արհեստավորները համախմբվում էին այնպիսի վայրերում, որտեղ կային շատ սպառողներ: Այդ իսկ պատճառով հայ ոսկերիչները գերազանցապես աշխատում էին պալատների, դղյակների ու վանքերին կից արհեստանոցներում և հիմնականում կատարում էին տիրապետող դասակարգի՝ ազնվականության և հոգևորականության պատվերները:

Հայ մատենագիրների աշխատություններում և վիճական արձանագրություններում կան հիշատակություններ միջնադարում ոսկյա և արծաթյա զարդերի ու այլ իրերի մասին:

Ոսկերիչների ձեռքերով էին պատրաստվում ականակուսթագերը, խուլրերը, գոտիները, իշխանական սեղանի արժաթյա, ոսկյա բաժակաները, ափսեները, հարսանյաց տուփերը, դաշույնների դաստակները և կանացի նուրբ զարդերը:

IX դարի կեսերից, քաղաքների ծաղկման և առևտրի զարգացման հետևանքով, խորանում է աշխատանքի բաժանումը արհեստների՝ այդ թվում նաև ոսկերչության մեջ: Քաղաքներում կենտրոնացված ոսկերիչ արհեստավորները բավարարում էին ոչ միայն ազնվականության և հոգևորականության պահանջները, այլև՝ նոր առաջացող քաղաքային դասի և որոշ շահով նաև գյուղական բնակչության կարիքները: Ոսկերչական արհեստի արագ զարգացումը նպաստել է նրա առանձին ճյուղերի մասնագիտացմանը: Նյութական կուլտուրայի մնացորդները ցույց են տալիս, որ ոսկերչական արհեստի մեջ զարգացած են եղել ձուլման, դրվագման, փորագրության, սևադի, դրոշմման, զուգաթելի, հատիկավոր, արծնապատման (էմալի), դրվագազարդման, բարձրաքանդակի և այլ ճյուղեր:

Միջնադարյան Հայաստանի ոսկերչության և արծաթագործության կարևոր օջախներն են Դվինը, Անին, Կարինը, Վանը, Երզնկան և այլ քաղաքներ: Դվինի և նրա շրջակայքի պեղումներից գտնված ոսկյա հարուստ զարդարանքները վկայում են այն մասին, որ Դվինը հանդիսացել է ոսկերչության կարևորագույն օջախներից մեկը:

IX—XII դարերում Դվինը ոչ միայն մասնակցում էր արտաքին առևտրին, այլև իր համար ստեղծել էր ներքին շուկա: Դվինում պատրաստված նուրբ գործվածքների և ոսկյա զարդերի մասին մեզ տեղեկություններ են հայտնում ոչ միայն հայ, այլև արաբ պատմիչները: Դվինում և նրա շրջակայքում հայտնաբերված ոսկյա զարդերն իրենց բարձր որակով և պատրաստման տեխնիկայով գերազանցում են ոչ միայն նախորդ, այլև հետագա դարերի տեխնիկային: Այստեղ պեղված ոսկյա խաչը, մանյակը, ականջօղերը և ապարանջանները, որոնք վերաբերում են IX—XI դարերին, համարվում են միջնադարյան ոսկերչական արվեստի անզուգական նմուշներ:

XVIII—XIX դարերում ոսկերչական արվեստի կենտրոններ դարձան նաև Երևանը, Ալեքսանդրապոլը (Լենինական), Ախալցխան և Ղարաբաղի Շուշի քաղաքը:

XIV—XVI դարերում օտարերկրյա նվաճողների ավերածությունների և հայերի ստիպողական արտագաղթի պատճառով հայ ոսկերչությունը մոտ երեք դար անկում է ապրում: Սակայն XVII դարի 30-ական թվականներից, ինչպես հաստատում են ոսկերիչների արվեստից մեզ հասած նմուշները, Հայաստանում ոսկերչությունը սկսում է ապրել զարգացման մի նոր շրջան, որ տևում է մինչև XIX դարի վերջը: Դա հաստատվում է Կարինի, Վանի, Երևանի, Ալեքսանդրապոլի հայ ոսկերիչների ձեռքով պատրաստած կանացի զարդերով, որոնց լավագույն նմուշները պահվում են թանգարանում:

Պատմական դեպքերի բերումով հայ ոսկերիչները աշխատել և գործել են նաև Հայաստանից դուրս՝ Կովկասի տարբեր քաղաքներում, Ռուսաստանում, Եվրոպայի ու Ասիայի հայկական գաղութներում և իրենց նուրբ ու բարձրորակ արվեստով նպաստել են ոսկերչության զարգացմանը տարբեր երկրներում:

Սակայն այդ արհեստը XX դարի սկզբներին և հատկապես առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական բարբարոսների կողմից կազմակերպված արևմտահայության ցեղասպանության և հայ ժողովրդի կուլտուրական բազմաթիվ օջախների ոչնչացման հետևանքով, կրկին անկում է ապրում:

1915—1918 թթ. դադարից հետո ոսկերչությունը ոչ միայն զարգանալու սլայմաններ չունեցավ (հատկապես Արևմտյան Հայաստանում), այլև նրա որոշ ճյուղերը կործանվեցին: Ոսկերչական մի քանի մասնավոր արհեստանոցներ էին մնացել միայն Երևանում և Ալեքսանդրապոլում, որոնցում աշխատում էին շատ քիչ մասնագետներ: Ծայր աղքատության հասած ժողովուրդը ոսկերչական իրերի պահանջ չէր առաջադրում:

Սովետական կարգերի հաստատումից հետո, Հայաստանի տնտեսական կյանքի աճմանն ու զարգացմանը զուգըն-

թաց, սկսում է աշխուժանալ նաև ոսկերչությունը: Ոսկերիչ-արհեստավորների աշխատանքը թե՛ Երևանում, և թե՛ Ալեքսանդրապոլում կազմակերպվում է կոլեկտիվ սկզբունքով: Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության բոլոր ձյուղերի բուռն զարգացումը լայն հնարավորություններ են ստեղծում աշխատավորների կյանքի պայմանների բարելավման համար և դրան ղուգընթաց աստիճանաբար մեծանում է ոսկյա և արծաթյա զարդարանքների պահանջարկը: Արծաթագործական արտեղները կատարում էին ոչ միայն առանձին անհատների, հիմնարկների կամ կազմակերպությունների հատուկ պատվերները, այլև պատրաստում էին վաճառքի համար ոսկյա և արծաթյա զարդեր ու իրեր, որոնք սպառվում էին ոչ միայն Հայաստանում, այլև Սովետական Միության այլ հանրապետություններում:

Արտեղներում կենտրոնացած ոսկերիչ և արծաթագործ վարպետներից լավագույններն իսկական արվեստագետներ էին և ցուցադրում էին ինքնուրույն ստեղծագործական աշխատանքի մեծ շնորհք և գեղագիտական նուրբ ճաշակ:

Հայ ոսկերիչներն իրենց ստեղծագործություններում արտացոլում էին սոցիալական և ազգային ճնշումից ազատագրված և ազգային վերածնունդ ապրող հայ ժողովրդի կյանքը:

Կիրառելով բուսական և երկրաչափական տարբեր տեսակի զարդանախշեր, օգտվելով ճարտարապետական բարձրաքանդակներից, մանրանկարչության մեջ եղած նուրբ նախշերից հայ վարպետները ստեղծում էին ոսկերչական արվեստին համապատասխան զարդանախշեր և ոսկյա ու արծաթյա թելերով հյուսում, նուրբ գրչով փորագրում և փոքրիկ մուրճով դրվագում էին նոր էպոխային համապատասխան պատկերներ:

1940 թ. հոբելյանական տարի էր հայ ժողովրդի համար: Նա տոնում էր իր նվաճումների քսան տարին: Սովետահայ ոսկերիչներն ու արծաթագործները արժանապաշտել դիմավորեցին այդ հոբելյանը: Ընդմիջտ հրաժարվելով առասպելական ու վերացական պատկերների վերարտադրումից, նրանք իրենց ստեղծագործությունների թեման դարձրին

սովետական մարդու նոր կյանքը, մեր հայրենիքի նվաճումները: Սովետահայ ոսկերիչներն ու արծաթագործները պատկերեցին մեծ Լենինին ու նրա ղինակիցներին, ստեղծեցին Հոկտեմբերյան հեղափոխությանը, քաղաքացիական կռիվներին և սոցիալիստական շինարարությանը վերաբերող բազմաթիվ գործեր: Յարիցինի պաշտպանությունը մեծ վարպետության մեջ պատկերող Գ. Դիոնեսյանի գործն առ այսօր էլ ցուցադրվում է ՍՍՀՄ Հեղափոխության թանգարանում: Արծաթագործական նուրբ աշխատանք է նաև արծաթյա տախտակի վրա փորագրված սովետական սահմանապահը:

Հայրենական պատերազմի տարիներին հայ ոսկերիչները ստեղծեցին միշտ քաղաքատանքներ, որոնցում արտահայտվեցին հայ ժողովրդի սերն ու նվիրվածությունը դեպի մեր մեծ հայրենիքը: Այդ աշխատանքներից արժանի է հիշատակության Հ. Ստեփանյանի գործը, որտեղ ռազմադաշտի ֆոնի վրա փորագրված է հեծյալ սովետական մարտիկը: Ռազմաճակատ մեկնելուց առաջ նա հրաժեշտ է տալիս իր հարազատներին. մեկ ձեռքով գրկել է իր զավակին, իսկ մյուս ձեռքը մեկնել է հեռու՝ դեպի կռիվ դաշտը, որտեղ իր նման հազարավոր մարտիկներ մարտնչում են մեր երկիրը ներխուժած ֆաշիստական հորդանների դեմ:

Վաստակաշատ ոսկերիչ Հրաչիկ Ստեփանյանը 1944 թ. արծաթյա տախտակի վրա փորագրել է Սևաստոպոլի հերոսական պաշտպանության այն մոմենտը, երբ ֆաշիստական բանդաները ցանկանում են ներխուժել քաղաք և հարվածել սովետական զորքերին: Ծխի, պայթյունի և որոտի մեջ սովետական մարտիկները «Հանուն հայրենիքի» բացականչությունով են մղում թշնամուն: Նույն վարպետը արծաթյա տախտակի վրա փորագրել է նաև Մոսկվայի պաշտպանների սխրագործություններից մի պատկեր:

Հոկտեմբերյան հեղափոխության 30-ամյակի առթիվ սովետահայ ոսկերիչները արծաթյա տախտակի վրա փորագրել են մեր երկրի անցած ուղու պատկերը Չմեռալին պալատի գրավումից մինչև Սովետական բանակի հաղթական մուտքը Բեռլին: Այդ տախտակի կենտրոնում պատկերված Կրեմլի շրջակա ամբողջ դաշտը զարդարված է հայկական նուրբ եռաթև զարդանախշերով:

Հայաստանում սոցիալիստական շինարարությունը պատկերող գործեր են ստեղծել նաև արտասահմանյան հայ համայնքների (Սպահանի, Ուրմիո, Ղազվինի, Մարաղայի) վարպետները: Հայաստանի 25-ամյակի առթիվ նրանք արծաթյա հինգ թերթիկի վրա մեր ժողովրդի դառը անցյալին հակադրել են սովետական իշխանության տարիներին արդյունաբերության, գյուղատնտեսության և շինարարության ասպարեզում ձեռք բերած մեր նվաճումները:

Հետպատերազմյան հնգամյակներում հայ ոսկերիչները արծաթյա տախտակների կամ հորելյանական սկահակների վրա դրվագմամբ, փորագրությամբ և թելի ու հատիկավոր զուգաթելի տեխնիկայով պատրաստել են նոր կառույցները պատկերող գործեր: Զուգաթելի վարպետ, վաստակավոր արվեստագետ՝ Վ. Հացագործյանի ոսկերչական լավագույն աշխատանքների մեծ մասը այժմ ցուցադրվում է Մոսկվայի և Լենինգրադի ցուցահանդեսներում: Այդ աշխատանքներից, գեղարվեստական նրբությամբ և թեմատիկայի բուլանդակությամբ լավագույններից են խաղաղության նավը և Հայրենական պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված աղբյուր-հուշարձանը: Խաղաղության նավը հյուսված է ոսկյա և արծաթյա թելերով ու պատկերում է Հայաստանի արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը և կուլտուրայի աճը: Խաղաղության նավի ցուլկին ամրացված է աղավնին: Նավը բռնված է ցորենի հասկերով և ծաղկեփնջերով, որոնք հյուսված են ոսկե թելերով և զարդարված են թանկարժեք քարերով: Դրանք խաղաղության, առատության և երջանկության խորհրդանշաններն են: Նավի առադաստը հյուսված է արծաթյա թելերից: Նրա վրա պատկերված ծառի ճյուղերը միահյուսվելով խաղողի ողկույղների հետ, կազմել են մի հսկա ծառ, որը մարմնավորում է սովետական ժողովրդի միասնության գաղափարը:

Հայաստանի սոցիալիստական շինարարության նվաճումներն արտահայտված են նաև 30-ամյակին նվիրված հորելյանական սկահակի վրա: Պատվանդանից վերև մի լայն գոտու մեջ ոսկյա թելերով հյուսված են զինուկարասներ, որոնց շուրջն առատորեն թափված են խաղողի ողկույղներ, որոնք պատկերում են Հայաստանի այգեգործության զարգա-

ցումը: Երկրորդ շարքում վարպետը պատկերել է բերքահավաքը կոլտնտեսությունում: Մի տեղ պատկերված է այգեկույթը, իսկ մյուսում՝ բամբակի հավաքը: Սկահակի կենտրոնական մասում քառանկյունի շրջանակների մեջ ոսկերիչը պատկերել է 30 տարվա ընթացքում Հայաստանում կառուցված արդյունաբերության և շինարարության կարևոր օբյեկտները:

Հայաստանի գյուղատնտեսության բերքի տոնին է նվիրված մի սկուտեղ: Այդ սկուտեղի հատակը վարպետը նմանեցրել է Զվարթնոցի հատակագծին, զարդարված շղթայաձև և վարդանման քանդակներով: Սկուտեղի վրա հեռվից երևում է Մասիսը, նրա լանջին փռված է Արարատյան դաշտը իր գյուղերով: Այդ ֆոնի վրա ավանդական տարազ հագած կոլտնտեսականները պար են բռնել և տոնում են բերքի տոնը:

Սովետահայ ոսկերչության թեմատիկայում իրենց արտահայտություն են գտել նաև հայ անվանի գրողների գործերը, դիմանկարները: Ոսկերչական լավագույն փորագրական աշխատանք է արծաթյա մի թաս, որը նվիրված է հայ մեծանուն գրող Հովհաննես Թումանյանին: Ոսկերիչ Վ. Գիոնեսյանը այդ թասի վրա նուրբ գրչով կերտել է բանաստեղծի դիմանկարը և մի դրվագ «Մի կաթիլ մեղր» պոեմից: Մեծ դեմոկրատ ու լուսավորիչ Խաչատուր Աբովյանի հիշատակը հավերժացնելու նպատակով գրողի հոբելյանի առթիվ սովետահայ ոսկերիչները արծաթյա թելերով հյուսել են նրա դիմանկարը: Սովետահայ ոսկերիչները կերտել են նաև հեղափոխական դեմոկրատ, հրապարակախոս Մ. Նալբանդյանի և ուսուսականավոր գրող Գոգոլի դիմանկարները:

Հայ ոսկերիչների ստեղծագործությունների թեմատիկան նվիրված է նաև արվեստագետներին: Արծաթագործ Հրաչիկ Ստեփանյանը արծաթյա տախտակի կենտրոնում փորագրել է մի մեծ կամար իր սյուներով, որի կենտրոնական մասում կերտված է հայ տաղանդավոր կոմպոզիտոր Կոմիտասի դիմանկարը<sup>1</sup>. կամարի վրա գրված են հայ կոմպոզիտորների և

<sup>1</sup> Այս նկարը նվիրված է Հայաստանի արվեստագետներին. նկարն այժմ գտնվում է Օպերայի և բալետի պետական թատրոնում: Թելերից հյուսել են նաև մեծ դեմոկրատ Մ. Նալբանդյանի դիմանկարը:

անվանի երգիչների անունները: Խոյակները նմանեցված են Զվարթնոցի արծվաքանդակ խոյակներին, որոնք իրենց վրա կրում են քառանկյունիներ: Այդ քառանկյունների մեջ աջ կողմից փորագրված է աշուղ Զիվանու դիմանկարը՝ սազը ձեռքին, իսկ ձախ կողմում՝ Սայաթ-Նովան քյամանչայով: Երկու սյուների վրա նուրբ գրչով փորագրված է Հայաստանում ցուցադրված օպերաների և ժողովրդական երգերի անունները, իսկ կամարի ներսում հեղինակը պատկերել է Արարատ և Արագած լեռները Արաքս գետով, որոնց վրա փորագրված են դրանց վերաբերող երգերի անունները: Հայ երաժշտությանը նվիրված արծաթյա այս տախտակի վրա քանդակված տեսարանները ոսկերչական արվեստի նուրբ գործեր են:

Յովետահայ ոսկերիչների աշխատանքներում իրենց արտահայտությունն է գտել նաև մեր եղբայրական հանրապետությունների անվանի կոմպոզիտորների գործունեությունը: Ադրբեջանում սովետական կարգերի հաստատման 25-ամյակի առթիվ պատրաստված արծաթյա սկահակը նվիրված է կոմպոզիտոր Ուլեհիր Հաջիբեկովին: Այդ սկահակի վրա վարպետ Ստեփանյանը փորագրել է Հաջիբեկովի կողմից բեմադրված օպերաներից առանձին դրվագներ:

Հայ ոսկերչության և արծաթագործության արվեստում այս վերջին տասնամյակում զարգացավ նաև բարձրաքանդակի եղանակով պատրաստվող զարդանախշերի տեխնիկան, որը մինչ այդ մեծ մասամբ կիրառվում էր փայտի և քարի վրա: Այդ բարձրաքանդակը արվում է մեծ մասամբ հյուսածո կմախքի վրա, որի լավագույն վարպետը համարվում է Ն. Գուլումջյանը: Նա միաժամանակ տիրապետում է ոսկերչության մեջ կիրառվող բոլոր ճյուղերին և ունի մի շարք նուրբ աշխատանքներ՝ դրվագման, թելի փորագրության, սևադրվեղանակով պատրաստված զարդեր, սկահակներ, սափորներ, տուփեր, սկուտեղներ: Վարպետ Գուլումջյանը իր արվեստի մեջ օգտագործում է հայ ճարտարապետության մեջ եղած բուսական և երկրաչափական քանդակներ ու մանրանկարչության մեջ կիրառված սիրամարգերի, աղավնիների և եղնիկների պատկերները: Իր աշխատանքներն ավելի գեղեցիկ դարձնելու համար նա վարդյակները և սիրամարգերի թևերը

ոճավորում է գունավոր, թանկարժեք քարերով: Այդ բազմերանգ քարերի կիրառումով իր աշխատանքներին նա տալիս է ուրույն երանգավորում: Արժաթագործ վարպետ Գույումջյանի գործերից անհրաժեշտ ենք համարում հիշատակել նաև 1960 թվականին պատրաստված արծաթյա մեծ սկահակը, որը կոչվում է «Արեւելք»: Այդ սկահակը ամբողջովին զարդարված է եղնիկների, սիրամարգերի և վարդյակների բարձրաքանդակներով:

Նույն ոճով է պատրաստված մի ուրիշ սկահակ, որը կոչվում է «Կիլիկիա»: Այն այժմ գտնվում է Մինսկի թանգարանում:

Գույումջյանը պատրաստել է նաև «Դվին» և «Անի» կոչվող սկահակները, որոնք իրենց գեղարվեստական նրբությամբ ոսկերչության արվեստում համարվում են լավագույններից և պահպանվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում:

Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակին է նվիրված արծաթագործ-վարպետ Գույումջյանի մեծ սկուտեղներից մեկը: Նրա կենտրոնում դրվադված է Վ. Ի. Լենինի դիմանկարը, որին շրջապատող առաջին շրջանակի մեջ պատկերված է Կրեմլը և մի գաղտնի տպարան, դրանք զարդարված են բուսական զարդանախշերով: Շրջանակի վերևի մասում սավառնում է խաղաղության աղավին: Իսկ երկրորդ շրջանակի մեջ դրվադված են Հոկտեմբերյան հեղափոխության մարտերից առանձին պատկերներ: Սկուտեղի բաց տարածությունները պատկերում են հեծյալների և հետիոտն զինվորների դիմանկարներ՝ ամբողջովին զարդարված հայկական զարդանախշերով:

Սովետահայ ոսկերիչների համար պատվավոր և ամենապատասխանատու թեման է եղել մեր սիրելի առաջնորդի՝ Լենինի, նրա զինակիցների, հայրենիքի համար զոհված հերոսների, անվանի գիտնականների դիմանկարների կերտումը արծաթյա և ոսկյա տախտակների վրա:

Ոսկերչության մեջ Լենինի դիմանկարի կերտման առաջին աշխատանքը պատկանում է արծաթագործ-փորագրիչ Վ. Դիոնեսյանին: Հայ վարպետները փորագրել և դրվագել են Վորոշիլովի և Միկոյանի դիմանկարները, որոնք ցուցադրվել են Համամիութենական ցուցահանդեսներում:

Դիմանկարների փորագրութիւնը ոսկերչից պահանջում է առանձին վարպետութիւն: Նա պետք է լավ տիրապետի նաև նկարչությանը, որպեսզի կարողանա արծաթյա տախտակի վրա ոսկերչական նուրբ գրչով կերտել դիմանկարներ:

Փորագրական նուրբ և թեմատիկայով հարուստ աշխատանք է ընկեր Միկոյանի ծննդյան 60-ամյակի առթիւ 1945 թ. Հայաստանի կողմից նվեր ուղարկված արծաթյա մեծ սկահակը: Այդ սկահակի վրա ոսկերչության նուրբ գրչով պատկերված է սովետական պետութիւնը և կոմունիստական կուսակցութեան ականավոր գործիչներից մեկի գործունեութեան առանձին պատկերները: Սկահակի պատվանդանն ու շուրթերը զարդարված են հայկական նուրբ քանդակներով:

Հայաստանի սովետականացման 30-ամյա հոբելյանի առթիւ մեր ոսկերիչները արծաթյա ծաղկամանի վրա հյուսվածքի տեխնիկայով պատկերել են հայ գեներալների և հերոսների դիմանկարները, իսկ այդ ծաղկամանի գունազարդ ծաղկեփրնջի մեջ կլոր շրջանակների վրա փորագրված են մեր երկրի անվանի գիտնականների դիմանկարները:

Ուսումնասիրված նյութերը ցույց են տալիս, որ սովետական կարգերի հաստատումից հետո ոսկերչութեան և արծաթագործութեան թեմատիկայում կատարվել է մեծ փոփոխութիւն, վճռական շրջադարձ դեպի մեր ժամանակաշրջանի պատմական պրոբլեմները և կյանքի նշանավոր դեպքերը:

Հայ ոսկերչութեան և արծաթագործութեան ստեղծագործութիւնների ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ սովետական իշխանութեան տարիներին ոսկերչութիւնն ապրել է մեծ վերելք, հարստացել է թեմատիկայով և ստեղծագործական բարձր վարպետութեամբ: Տեխնիկայի կատարելագործման հետևանքով բարձրացել է նաև ոսկերչութեան արտադրողականութիւնը: Ներկայումս մասսայական սպառման համար արտադրվում են մեծ քանակութեամբ ոսկյա ու արծաթյա իրեր, որոնցից շատերն աչքի են ընկնում նուրբ արվեստով:

Վերջին տասնամյակում հանդես են եկել բազմաթիւ երիտասարդ և ինքնուրույն ճանապարհներ որոնող արվեստա-

զետներ, որոնք կիրառական արվեստի տարբեր ճյուղերում պատկերել են մեր ժամանակի կյանքն ու նվաճումները, ժողովրդի սերն ու նվիրվածությունը իր հայրենիքին: Այդ ստեղծագործություններն այժմ ցուցադրվում են ժողովրդական ստեղծագործությունների տուն-թանգարանում: Սովետահայ ոսկերիչներից շատերի գործերը ցուցադրվել են նաև արտասահմանյան տարբեր երկրների ցուցահանդեսներում և արժանացել են բարձր գնահատականի:

Հայրենական պատերազմում ղոհված զինվորի հիշատակը հավերժացնելու համար հայ արձաթագործ վարպետները արձաթյա տախտակների վրա փորագրել են ոչ միայն աղբյուր-հուշարձաններ, այլև սափորներ: Հիշատակության արժանի է ինքնուս վարպետ Լևոն Գևորգյանի «Հավերժ հիշատակ ընկած զինվորին» մակագրություն կրող սափորը, որն ունի 60 սմ բարձրություն, պատրաստված է զուգաթելի տեխնիկայով և զարդարված հայկական զարդանախշերով: Այդ աշխատանքն այժմ ցուցադրվում է ցուցահանդեսում և արժանացել է արձաթյա մեդալի:

Սովետահայ ինքնուս վարպետներից արժանի է հիշատակման նաև Արծրուն Բերբերյանը: Նա դրվագման տեխնիկայի լավագույն վարպետներից է: Բերբերյանը վերարտադրել է ուրարտական շրջանին պատկանող, Կարմիրբլուրի պեղումներից գտնված Սարգուրի վահանը, արձաթյա գավաթը և աշտանակները, որոնք արտասահմանյան ցուցահանդեսներում արժանացել են բարձր գնահատականի: Նրիտասարդ արձաթագործներից են Ժիրայր Զուլոյանը, Գաբրիել Հացագործյանը, Գուրգեն Թորոսյանը, Հակոբ Փիլիպոսյանը, Վ. Հարությունյանը, էդվարդ Իսկանյանը, Մհեր Մանդալյանը, Ռուբեն Սարվազյանը, Վալերի Սարգսյանը և շատ ուրիշներ: Օգտագործելով հայ ոսկերչության և արձաթագործության նվաճումները, նրանք մի նոր աստիճանի են բարձրացրել սովետական ոսկերչական արվեստը: